

# Կ Պ Օ Ն Ա Կ Ա Ն

## ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ

Յ. Ա. Ք. ՕՐԲԵԼԻՈՅ ԱՇԽԱՏԱՍԻՐԱԾ ՌԵԿԵԴԵ-  
ՑԱԿԱՆ, ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՎԵՐԱՅ, ՏՊԱՆ ԹԻՖԼԻ-  
Ց ԶԻՒՄ 1874 ԱՄՒ:

Եյս զբքուկը ունի այսպիսի մակազրու-  
թիւն. “Դասատեսր եկեղեցական պատ-  
մութեան, համառօտագրեալ ի մատենա-  
դրաց նախնեաց մերոց,, :

Ընդ հակառակը չէ քաղել մեր նախնի  
մատենագիրներէն հարկաւոր տեղեկու-  
թիւնքը, այլ հետեւել է Հայ Կաթոլիկ  
պատմազրաց, այսինքն Չամչեանին և  
ԳալթրՃեանին, որով տուել է պատմու-  
թեանն սխալ ընթացք, ինչպէս կապա-  
ցուցուի մեր դիտողութեան մէջ :

Զեկուցման տակը ծանօթութիւն  
կայ. “Ե իմ այլ ևս տպազրութիւն եկե-  
ղեցական պատմութեան յամին 1856, լոյց  
կարի համառօտ,, :

Եյս կարի համառօպ նա չէ դրեւ այլ  
Ապլլանթեան Աքքեպիսկոպոսը, որ որբա-  
զան պատմութիւն էին և նոր օքի-  
նաց ամենահամառօտ դրքուկի վերջը եր.  
84—104 կցած է և պատմութիւն Հա-  
յոց Եկեղեցւոյ, որ տպազրեալ է ի Մոս-  
կուայ յամին 1832, և նա փոխել է աշ-  
խարհաբար:

Զեկուցման զրաբար շարադրութիւնը  
բոլորովին նման է Գեր. Այլազեանի ոճին:

Եյն պատմութեան աշխարհաբար ըե-  
զուի վրայ չեմք կամենում խօսիլ, որ բա-  
նը չերկարուի. նա չունի կանոնաւոր դար-  
ձուած բանից, և ոչ կաու. նա երբէք չէ  
հետեւել այժմեան դպրոցական ըեզուին,

որպէս հյեցին (փոխանակ ձգեցին), լոցա-  
(լցուաւ), որոն+ (որը), բերէ (բերէ), ով-  
րէ (ախրէ), դրոն (գանէ կամ գտանէ), ոռ-  
վարացնում (ուսուցանում), կարծիքները,  
հնարժերը, երկու յոզնակի վերջաւորու-  
թիւնք + և եր, (կարծիքը, հնարները), ո՞ն  
ո՞ր (որ) ելն, ելն+ որու հայցականը առ հա-  
սարակ նման է սեռականին, իսկ բացառա-  
կանը վերջանումէ ից, և տեղականուն հայ-  
ցականն է դնում զ նախդիրով, և երբեմն  
ուղղականը, որպէս եր. 82, Հայոց, Ա շաց  
և Աղուան+ը դաբանել. առաջին երկուքը  
սեռական հոլով են և երբորդը ուղղական,  
նոյնպէս բացառականը դնումէ և բուն  
վերջաւորութեամբ է. զօ. եր. 109 և  
129, կայունն, կայուրէ, ամբաղջուէ, զորս  
թողնում եմ լեզուազէտ կարգացողնե-  
րուն, մեք սկսինք այժմ մեր նկատողու-  
թիւնքը: Աակայն այս ևս յայանումեմ, որ  
եթէ մանրամասնաբար գրել էի սխալները,  
նոյնաչափ գիրք կը լիներ, և մեր ժամանա-  
կին աւելորդ ծախս. այլ երեւելքը միայն  
զրեցի, որ ուսանողները և կարգացողները  
հասկանան սխալը, և ձշմարտութեան ա-  
շակերտ լինին:

Եր. 2. տող 24: “Առաքեալք ընտրե-  
ցին եօթն բարեպաշտ մարդիկ, ձեռնադ-  
րեցին նորանց Աարկաւագ և կարգեցին ըս-  
պարաւոր սուլը սեղանին . . . և տպա-  
միանգամայն յանձնեցին նոցա հասարա-  
կաց սեղանի սպասաւորութիւնը,, և լին:  
Եր. 22, տող, 10: “Կային նմանապէս  
կանայք, որք Աարկաւագուշիք էին կոչ-  
ւում, և որոց ընտրութիւնը նոյնպէս ձեռք  
դներով և աղօմքով եր լինում,,:

Եյս բանը հակառակ է սուրբ զրքին,  
ուր Գործք Առաք, զլ. Օ. 1—6, պատ-

մումէ, թէ, 12 Առաքեալք տեսնելով՝ որ սեղանին ծառայելը արգելք է լինում քարոզութեան, առաջարկեցին հաւատացեկոց ընարել իրանց մէջէն եօթն մարդիկ և ոգուով սրբով և իմաստութեամբ լի, որ կանդնեցնեն սեղանի ծառայութեան վրայ, և նոքա ընարեցին զլտեփանոս են, և Առաքեալք աղօթք արին ու զրին նոցա վըրայ ձեռք: Աւրեմն Առաքեալք չէին ընարողներ, այլ հաւատացեալք, և նախ հասարակաց սեղանին էին ծառայում, ապա կարգեցին և սուրբ սեղանին ծառայելու: Խակ կանայք, որք Աստիա-առաջնորդ լինին կոչուած, չկայ Գործք Առաքելոցի մէջ, այլ Պօղոսի թղթերում, և ոսմ. Ճ.Օ. 1, և ուրիշ աեղերում մի քանի կանանցը անուանում է կեղեցւոյ սպասաւորներ, բայց չկայ նոցա համար ոչ մի տեղ՝ զրուած, թէ ձեռնազրութեամբ լինին նորա սահացած այն պաշտօնը, այսպիսի կանայք և այսատանեացց Ակեղեցին ունի աւանդութեամբ, որք կոչումնեն թշի ֆլեղու բարբառով՝ ապաշխառող սոցա զործն է (որպէս առաքելական գարում) աւելի եկեղեցին, ուահել հիւանդները, պատանել կին մեռելը, մերկացնել մլրտութեան ժամանակ հասակաւոր կանայքը, և եկեղեցւոյ ողորմու թիւնը տանել այրի և աղքատ կանանց համար:

Եր. 7. Պետրոս առաքեալի կտուել անօթի տեսիլքը և Առւոնելիոս հարիւրա, պիտի գարձի պատմութիւնը յետ ու առաջէ զրած, անս և համեմատիր Գործ.

Առաք. դլ. Ճ:

Կոյն եր. «Թաղէոս նոցա համար մէկ բարեպաշտ մարդ Զաքարիա անունով՝ Եպիսկոպոս ձեռնազրեց,, :

Վաւ եր, եթէ ասել եր, իւր աշակերտ Զաքարիայն, ինչպէս զրում, առանց թուահամար երեսի վրայ— ——:

Եր. 14. առղ 13. «Պօղոս . . . իւր բանտարկութեան ժամանակ և առմում . . . զրեց հետեւեալ թուղթերը, որոնք էին առեկեղեցիս և առմայեցւոց, Կորնթացւոց, Գաղատացւոց, Եփեսացւոց, Փիլիպպեցւոց, Կողսացւոց, Թեսաղնիկեցւոց, և երկու թուղթ առ . . . Տիմօթէոս, առ Տիտոս, առ Փիլիմոն և առ Երացեցիս,, :

Եյս սխալ է, զի Պօղոս բանտի մէջ եղած ժամանակ թէպէտ զրել է թղթեր, բայց ոչ բոլորը, այլ զանազան ժամանակ և զանազան տեղերում, զորօրինակ, և առմայեցւոց վրայ զրել է Կորնթոսում: Առաջին թուղթ Կորնթացւոց վերայ՝ Եփեսոսէն (1 Կորն. Ճ.Օ. 8): Խակ երկրորդ թուղթը Վակեղոնիա քաղաքէն՝ առաջին թղթի յաջորդ տարին (2 Կորն. դլ. թ.), թեսաղնիկեցւոց վերայ Աթենքէն, Տիմօթէոսի առաջին թուղթը՝ Լաւոդիկիայէն, Տիտոսի վրայ՝ Վակեղոնիայի Կիկոպօլիսէն, և մնացածները և ուոմէն է զրել:

Եր. 15. առղ 5: «Պետրոս առաքեալը Պօնտացւոց, Կապաղովկացւոց և Բիւթանացւոց կողմերը քարոզելուց, և Անտիոքայ աթոռը հասատելուց յետոյ, 46 թուին եկել էր և ոսմ, ուր Ենթոնի հաւածանաց ժամանակ բռնուեցաւ, ինչպէս որ նոյն քաղաքում բռնուած էր սուրբն Պօղոս, և երկուքն միասին խորը բանախ մէջ ինն ամփս մնացին, և լու,, :

Վաւ եր, եթէ ուշադրութիւն դարձնուեր Գործք Առաքելոցի և Պօղոսի թղթի Գաղատացւոց վրայ, և նոյն խակ Պետրոսի Կաթողիկեացց թղթի վրայ և Կորե-

նացւոյ պատմութեան վրայ, և չեր զըրուել Կաթոլիկաց համաձայն վերեկի բանը, որ ստումէ հետեւեալ փաստերով:

**1.** Գործք Առաքելոց դւ. Ճ. Ե. 19—27, պատմումէ, թէ Արքացի մարդիկ նախապէս հիմնեցին Ենտիոքում Քրիստոսի Եկեղեցին, ապա Առաքեալք լսելով այս, ուղարկեցին զբանաբաս, որ աւելցրեց հաւատացելոց թիւը, և յետոյ Բառնաբաս գնաց Տարսոն և իւր հետ տարաւ զՊօղոս Ենտիոք (44 թ), որք առաւելքազմայրին քրիստոնէից թիւը, և առաջնոր ընկալան քրիստոնեայ անունը: Պօղոս և Բառնաբաս 52 կամ 54 թուին կրկին եկան Ենտիոք, և նորահաւատ Նրէից և հեթանոսաց մէջ ընկած հակառակութեան պատճառաւ գնացին Երուսաղէմ վէճը յայտնելու Առաքելոց: Եյս միջոցը՝ որ է տասըն տարի՝ Պետրոս չէ եղած այն տեղ, ուրիմն Ենտիոքայ աթոռը հաստաեցին Բառնաբաս և Պօղոս ըստ ստոյդ պատմութեան Պուկասու, և ոչ Պետրոս ըստ անհիմն պատմութեան պապադաւան: Գամթրածեանի և միւս կաթոլիկաց: Որովհետեւ Ենտիոքայ եկեղեցին հաստաելուց յետոյ 14 տարի անցնելով Պօղոս զնումէ կրկին Երուսաղէմ, ուր գտանումէ զՊետրոս, և սորամն յետոյ Պետրոս զնումէ Ենտիոք, ուր լինումէ և Պօղոս (Գաղ. Բ. 11):

**2.** Պօղոս 44 թ. լինումէ Բառնաբասի հետ Ենտիոքում, իսկ 45 և 46 թ. երկուքն ի միասին սկսումնն առաջնութարհորդութիւնը գետի Ալեկիս, Արքոս, Պամիւլիս, Պիսիպիս, Ենտիոք, Իկոնիս, Լիկայոնիս, Դերբէ, և 8 կամ 10 տարի ծանապարհորդութենէն յետոյ դարձան Ատաղեց վրայով Ենտիոք.

ուրիմն Պօղոս 46 թ. Հռոմաւմ չեր, նոյնպէս և Պետրոս:

**3.** Կերոնը 57 թ. նստաւ կայսր, իսկ 46 թ. էր Աղողիոս, որի ժամանակ չկար հալածանք, և սկսաւ 65 թ. Կերոնի ժամանակ առաջին հալածանքը, ուրիմն ոչ Պօղոս էր բանուած և ոչ Պետրոս 46 թ. իսկ եր. 14, նորա (Պօղոսի) կապանքով Հռոմ գնալը զնումէ 62 թ.:

**4.** Խորենացին գրումէ, որ Պետրոս քարոզելէ Պարսկաստանում և Ասորեստանում, առաջ բերելով Արգարի թուղթը Պարսից Երտաշէս թագաւորի վրայ և Կերոնէ՛ Ասորեստանեայց թագաւորի վրայ, որք Արգարէն խնդրումէին ուղարկել սուրբ Խաղէոս. և նա պատասխանումէ, թէ նորա գլխաւոր ընկերներէն մէկը Ախմոն անուն Պարսից կողմն է, զտէք զնա (Խոր. զիբք Բ. դւ. 1. Պ.): Եյս հաստատումէ և Ախմոն Պետրոս Կամթուղիեայց թղթի մէջ, «Ազգոյն տայ ձեզ՝ որ ի Բարելոն ընարելակից եկեղեցին է,, (երե. 13):

**5.** Կորա մաշուան համար Հռոմում չայ ստոյգ բան, զի Եւսեբիոս եկեղեցական պատմիւ՝ զիբք Բ. դւ. 27, զիբք Գ. դւ. 1՝ զրումէ, «Եւանդութիւն է, թէ Պետրոս Հռոմում խաչեցաւ: Թէ՛ իւր կեանքի վերջէն օրերումն է եկել Հռոմ,, :

**Եր. 15.** «Առուրբ Յովհաննէս Աւետարանիւ մնաց Փաքք Ասիա և հիմնեց Ափեսոսի եկեղեցին,, :

Ափեսոսի եկեղեցին նա չհիմնեց, այլ Պօղոս առաքեալ, ուր երկու տարի քարոզեց (Գործ. Ճ. Ճ. 1—10), և Մակեդոնիա զնալու ժամանակ կարգեց զՏիմոթէուս այ։ քաղաքի եպիսկոպոս Տիմ. Ե. Յովհաննէս գիրք Պետրոս կողմէ կատարուած է (Երե. 4): Իսկ Յով-

հաննես գնաց Եփեսոս Տիրամօր մահուան յետոյ, ուր առաւել բազմացրեց հաւատացեալքը:

Եր. 16. Բարդուղիմոսի համար զրումէ թէ՝ “Վորթեղերծ արին Աղուանքում,, և ապա եր. 17. թէ՝ “Անատրուկ հրամայեց մօրթը հանել և խաչել Աղքակայ կողմերում,, :

Եյս զանազանութեանց միջոցի տողերն են 15, զոր չե նկատել. զի նախ զնումէ սուրբ Բարդուղիմոսի նահատակութիւնը Աղուանքում, և յետոյ Աղքակայ կողմերում: Աղքակն է Պանայ ծովի արևելեան ափը, ուր և նահատակեցաւ սուրբ Առաքեալն, և է Տաճկաց իշխանութեան ներքոյ. իսկ Աղուանքն է Կասպից ծովի ափը Առուսաց տերութեան ներքոյ:

Եր. 21, տող. 18. “Եռաջ քան եկեղեցւոյ պաշտօնեայ ձեռնադրելը պահք պահել և աղօթք անել էին տալիս նորանց,, (այսինքն ձեռնադրելեաց): Թէ “Եռաքեալք ու շաղրութեամբ միայննոցա էին ընտրում, որք յԵսաուծոյ կոչուած էին ի քահանայական աստիճան,,,:

Եյս բանքն մասամբ հակառակ են սուրբ գրքին. 1. Գործք Առաք. Զ. 6, Դ. 22. երեսումէ որ Առաքեալք ինքեանք առաջ պահք էին պահում և աղօթելով ձեռնադրումէին. 2. ընտրութիւնն հօգեսոր անդամոց սովորական էր եկեղեցւոյ համաձայն ընտրութիւնն (Գոր. առ. Ա. 23—26: Զ. 3. 5: Տիտ. Ա. 5): Եյս տեսակ ընտրութիւնն ես կանոնով հաստատուած է: Իսկ ընտրութիւնն աստուածային յայտնութեամբ շատ սակաւ է, որպէս Պօղոսի և մեր Առաստորիչ Գրիգորի ընտրութիւնն :

Եր. 21, տող. 28. “Ալւրակի օրերը հաւատացեալք հաւաքւումէին մի հաստիքի մարդոյ տունը, ուր պէտք է ամենքն ես գտնուէին, առաջ կարգումէին սուրբ գիրքը, և ապա առաքեալք . . . խրատումէին և սովորացնում ժողովրդեան,,:

Եյս բանքն ես հակառակ են սուրբ գրքի պատմութեան. զի նա մեզ ուսուցանումէ, որ առաքելական (առաջին) դարը աստուածպաշտութիւնը կատարում էր միշտ երեկոյին, իմա՛ Պատարազը, որպէս ազատ ժամանակ հալածանքէն և բռնութիւնէն, և լինումէր ամենայն օր Պատարագ, ուստի և հաւատացեալք միշտ ներկայ էին աստուածպաշտութեան, ինչպէս Գործք Առաքելոց պատմութիւնը դւ. Դ. 46, զրումէ: “Հանապազօր (ամեն օր) կանիւեալ միաբանութեամբ ի տաճարն, և առանին բեկանէին զհացն,,,: Եւ որ գրումէ նոր պատմաբանը, թէ հաւատացեալք հաստիւնամբէն Նե հաստացակ ճարդոյ պուն, կամենումէ ցուցանել՝ թէ իշխաններու կամ հարուստներու աներու մէջ չեր լինում այդպիսի ժողով. ուստի խորհուրդ կուտանք նրան, որ կարդայ սուրբ գիրքը և ուսանի, թէ աստուածպաշտութեան տեղերը որոշուած էին. Երուսաղէմում էր սովորաբար վերնատունը, ուր կատարեց Քրիստոս խորհրդական ընթրիքը, և ուր առաքեալք ընկալան Հոգին սուրբ: Իսկ Երուսաղէմն դուրս նոյնպէս որոշուած էին, և ոչ թէ ուր որ կպատահէր: Պօղոս առաքեալ այն որոշուած տեղերը կոչումէ Էկչունց (1 Կորնթ. Ճ. Ա. 18, 22): Իսկ Գործք Առաքելոցը Տաճար:

Եր.—“Տուրիա, սա էր ինչպէս կարծւումէ, Տովորիթայ և նորա Տուրիա

որդւոյ ազգից, որ Կինուեն թողար, եկաւ քնակեցաւ Եղեսիա քաղաքում,, :

**Այս տեղ կարծիքականին է հետեւում,** և ոչ պատմութեան, զի ինչ հարկաւոր է ասել Հնալէս Հարժուն-Աէ, երբ Խորենացին զրումէ, որ Տուրիա Եղեսացին էր Բագրատունի ազգէն (զիբը 18. դւ. 1. 91): Խոկ Տուրիայի ազգի տեսողութեան համար ոչ-ինչ յիշատակութիւն չկայ սուրբ գրքի մէջ: Եւ մի՞թէ ում անունը Տուրիա լինի, Տուրիայի ազգէն է:

**Եր. 33. “Ոկրտութեան խորհուրդը և այլ բարեկարգութիւնք,, :**

Ի՞նչ բարեկարգութիւնք են, ոչինչ չէ պատմում: այլ միայն մի քանի խօսք մկրտութեան և ապաշխարութեան վրայ, և ինչպէս վերնագրէն երեսումէ ։ Օրբելին մկրտութիւնը ընդունումէ խորհուրդ, խոկ ապաշխարութիւնը բարեկարգութիւն:

**Եր. 39 և 40. Պատմելով այսաստանի երկրորդ լուսաւորութիւնը սուրբ Գրեիգոր Լուսաւորչի ձեռով՝ վերջումը մի նորալուր բան է զրում: “Այս վերապի մէջ իրբե Հոգւոյն սրբոյ գպրոցում վարժեցաւ նա աւետարանական քարոզութեան մէջ և պատրաստեցաւ այսոց ազգի Լուսաւորիչ,, :**

Պիրապը շնուռմէ Հաթոյն ունոյ դպրոց, ուր Լուսաւորիչ վարժումէ առեփարանական ժարողութեան մէջ: Աերեկի թէ սուրբ լուսաւորիչը ո՛չթէ Կեսարիայումուսաւ, այլ վերապի մէջ առաւ աստուածաբանական ուսումը, և այն տեղ է պատրաստում զինքը Հայոց ազգի Լուսաւորիչը լինելու, և յառաջազոյն չերնախասահմանուած յԱստուածոյ այդ առաքելական պաշտօնին: Ուրեմն երբ որ վերապը Հոգւ ոյն սրբոյ գըպ-

րոց էր, արդեօք սուածին ընկնողներն եւ նորա մէջ վարժուեցան աւետարանական քարոզութեան մէջ:

**Եր. 41. Հոկիսիմեանց պատմութիւնն է զրում, թէ Ասամն Բզնունեաց գաւառը և գնացին բնակւեցան Վաղարշապատ քաղաքի մօտ մի հնձանայարկի մէջ,, :**

Պատմաբանը ինչպէս երեսումէ, Վաղարշապատը շնուռմէ Բզնունեաց գաւառի քաղաք. զի թէ տեղեակ լիներ Հայաստանի աշխարհագրական զրից, կտեսներ՝ որ Վաղարշապատն է մայրաքաղաք Երարատեան աշխարհի, և աթոռանիստ թագւարութեան. նոյնապէս սխալ է և պատմութիւնս, զի սուրբ Հոկիսիմեանք հասան Տոսպ գաւառը Վասպուրականնահանդի, որ է Վանայ ծովի արևելեան կողմը, և ըլնակեցան Վարագոյ լեռան վերայ, մօտ Վան քաղաքի. Խոկ Բզնունեաց գաւառը ընկնումէ նոյն ծովի արևեմուտ: Պատմաբանը չգիտեմ՝ թէ ի՞նչ մաքով չէ յիշում Հոկիսիմեի ունեցած կենաց Փայտի մասը, զոր գաղեցին այն սարումը, և որ յետոյ յայտնուեցաւ, և մեր Եկեղեցին տօնումէ Վարչական խաչի անունով:

**Եր. 43., Պաւլիկեանց մոլորութիւնը . . . երկարատե չէր,, :**

Ընդհակառակը երկարատե էր, ինչպէս պատմութեան ընթացքը ցուցանում է. զի Պաւլիկեան աղանդը տեսեց մինչև 840 թ. որի շառաւելիղէն ծագեցաւ Յանդրակեցոց աղանդը:

**Եր. 50. Հոկիսիմեանց նշխարներութաղման համար, և սուրբ Եջմիածնայ հիմնարկութեան համար, ։ Օրբելին պատմում է մի օտարութիւն բան, որոց (կուսանաց) մարմինները . . . ժողովեց տարաւ-**

այն հնձանքը, ուր նորանց բնակութեան տեղն էր և թաղեց այն տեղ։ Ուռքին Գրիգոր սուրբ Կոստանտինաց հանգստարանի վրայ վաթունելիք օր մնաց, և քարոզումն ըստ . . . : Թագաւորը և իշխանները բոլոր ժողովրդոց հետ միասին շնչեցին երեք վկայարան, և որոց մէջ ամփոփեցին նոցագերեզմանները։ Արանից յետոյ սուրբ Գրիգորը Սստուածային յայտնութեամբ մի տեղ պատեց որմով, ուր նա ինքն տեսաւ Միածին որդին յերկնից իջեալ,, :

Պատմաբանը գետ առաջ թաղումէ սըրբոց մարմինները հնձանում, ապա շնուռմէ վկայարաններ, որոց մէջ ամփոփումէ նոցագերեզմանները. բայց գերեզման բառը երբէք չէ նշանակում մարմինը մեռածի, այլ փորած փոսը, որ է մեռելի մարմնոյ պարունակողը իւր մէջ, ուրեմն կերեի թէ գերեզմանը քառակուսի կարել են, ու վերցրել տարել, ամփոփել են վկայարաններու մէջ, հուսկ յետոյ Լուսաւորիչն աստուածային յայտնութեամբ պատումէ որմով մի տեղ, ուր աեսաւ Միածին Որդին երկնքից իջած։ Եյս ամենայն հակառակ են սայդ պատմութեան Եգաթանգեղոսի, զի սուրբ Լուսաւորիչ թէ թաղեց կուսանաց նշխարները հնձանում, այլ իւրաքանչիւրինը պատահեց իւրաքանչիւրի պատառոտուն շորերով, ու ժողովեց հնձանի մէջ, և 66 օր քարոզեց նոցա, ապա առաջարկեց բազմութեանը շնչել նոցահամար վկայարաններ, և այն գիշերը տեսիլք տեսաւ, որ Որդին Միածին ուկէ ուռը ձեռին իջաւ երկնքէն և այնպէս սասարիկ խիեց քաղաքամիջնն, որ թնդաց անդունդքը, և Մայր Երկեղեցւոյ շնուռթեան ձեր ընտակըն կանգնեցաւ, նոյնպէս և կուսա-

նոց նահատակութեան երեք տեղերու վրայ իջաւ լոյն խորանաձեւ։ Վպա շինեց նոցա վկայարանները, ուր ամփոփեց սուրբ նշխարները, իսկ Նորիկոսիմէի մասանց արկղը կնքեց իւր մատանիքով։ Յետոյ Միածինի Իջման տեղը պատեց որմով ևն։

**Եր. 56, տող 20 և 25:** Երիսոսի պատմութիւնն է զբում, թէ “Առա կամակիցների մէջ համրաւաւորներն էին երկու Եւսեբիոսները, մինը Ամերիկիայ եպիսկոպոսը, միւսը Եղեքսանդրիոյ։ . . Եւ երբ որ Երիսոս աքսորւեցաւ Եղեքսանդրիա։”

Եատ սխալէ այս, զի միւս Եւսեբիոսն, ո՞չ թէ Եղեքսանդրիայի եպիսկոպոս էր, այլ Պաղեստինոյ Կեսարիայի, որ է Երկեղեցական պատմութեան զրողն, իսկ Եղեքսանդրիայի եպիսկոպոսն էր սուրբն Եղեքսանդրը . . . Եւ Երիսոս ո՞չ թէ աքսորեցաւ Եղեքսանդրիա, այլ Եղեքսանդրիայէն Պաղեստինա են։

**Եր. 57, տող 1 և 3.** “Կոստանդիանոս . . . նամակ գրեց Երիսոսին և Եղեքսանդրը հայրապետին հրամայելով նոցազակելեցուն և այնպիսի մոլորութիւններ ժողովրդոց մէջ չտարածել։”

Փառք ու պատիւ նոր պատմաբաննին, որ ուղղափառութեան պաշտպան և ախոյեան, զԵրիսոսն երկու անգամ նպովող մասնաւոր ժողովներով այն է սուրբ Եղեքսանդրը Հայրապետը՝ “Ամերիկայ տիեզերական ժողովոյ նախագահը ևս աղանդաւոր շնչեց որպէս զԵրիսոս, որին Կոստանդիանոս գրումէ զապել լեզուն, և այսպիսի մոլորութիւններ չտարածել ժողովրդոց մէջ։”

**Եր. 57, տող 12.** “Ուռքը Գրիգոր լուսաւորիչը . . . ինչ ինչ պատճառաւ չկամեցաւ գնալ, . . .”

Վան թէ զրումէ մութը ինչ ինչ պատճառաւ, թող զրեր յայտնի, թէ Աւազնաց, որ առաւել պատիւ չստանայ խոստովանողական անուան համար,, (Խորեն, զիրք Բ. ԴԼ. Զթ.), որ աւելի պատիւ էր և փառք:

Եր. 65, Պանիել ծերունի քահանայի համար կը զրէ, թէ Յօնուսիկի տեղընտրւեցաւ կաթողիկոս,, . . . թէ Ասորան շատերը կաթողիկոսի կարգը չեն զըձում, որովհետեւ երկար չտեսեց իշխանութիւնը,, :

Պանիելի կաթողիկոս լինելու համար ոչ ոք զրող չկայ, մանաւանդ Խորենացին, այլ Յօնուսիկէն յետոյ ամենքը դնումեն զՓառներսէ:

Եր. 66, Մեծին Կերսիսի գործերը համառօտ պատմելով, կասէ Ասորասքան-չելի գործքերը տեսնելով թագաւորը և բոլոր իշխանները, միարան հաւանութեամբ եպիսկոպոսաց, առիտիցին նորան պատրիարքութեան իշխանութիւն վարել,, :

Ոչ ոք չէ ստիպել զսուրը Կերսիս Պատրիարքութեան իշխանութիւն վարել և ստիպելու հարկաւորութիւն ևս չկար, որովհետեւ նա վարումիր այն իշխանութիւնը, որպէսնորանախնիքը, միայն Պատրիարք տիտղոսը դեռ չկար, ուստի Երշակ թագաւորը, նախարարները և եպիսկոպոսները տեսնելով նորա արդիւնաւոր վաստակները, ժողով գումարեցին ի Աղաղաշապատ 366 թ. և տուին նրան պատրիարք տիտղոսը, ու վճռեցին, որ Հայոց պատրիարքը ձեռնադրուի իւր եպիսկոպոսներէն և այլ ևս չգնայ Աղաղաշապատ ձեռնադրութեան համար: Խոկ եր. 69, տող 16,

կասէ ԱՊ ասնորոյ մեծ հանդեսով կարգեցին Կերսիսին Հայոց եպիսկոպոսապետ, որ այնուհետեւ աւելի փառաւորագոյն վարի Հայաստանեայց Խկեղեցւոյ առաքելական աթոռը,, :

Օարմանալի ընդդիմախօսութիւն, վերել գրեց, թէ առիտիցին նորան (Կերսիսին) պատճիարչութեան իշխանութեան վարչել, և ապա թէ իտրիցին եպիսկոպոսապետ: Ա. Օրբելին այս տեղ չէ որոշում Պատրիարք և Խպիսկոպոսապետ բառերը, զի պատճի, կը նշանակէ հայր, իսկ արդ՝ պատրի, ուրեմն հայրապետ, և եպիսկոպոս յունարէնէն կը թարգմանուի հայերէն պէտու, ուրեմն պէտուապետ կամ Քլու-ի պէտու-ջներու, և այս այն բառն է, որ մեք յունարէն եմք գործածում Երքեպիսկոպոս, կամ ըստ Յունաց Երիսին պիսկոպոս: Բայց մի՛թէ մինչեւ սուրբն Կերսիս Հայերէն պէտու, ուրեմն պէտուապետ, որ 366 թ. աղքային ժողովով են կարգում նրան Եպիսկոպոսապետ: Մի՛թէ չէ կարգացել սուրբ Արթանէսի (որ Կերսիսի պապու հայրն էր) նամակը Կոստանդ Կայսեր վրայ, զոր բաւական յառաջ է բերում Խորենացին (զիրք Գ. ԴԼ. Ե.): Ակիզը այսպէս, Կեպիսկոպոսապետ Արթանէս և ուր ընդ նույն եպիսկոպոսապետ: Բայց մէկ զարմանք ևս այս է, թէ Ա. Օրբելին ընչու չէ ասում ուղղակի թէ այն ժողովը տուաւ մեծն Կերսիսին Պատճիարք տիտղոսը, ինչպէս Յովհաննէս պատմարան Կաթողիկոսը գրումէ առնլով կաթողիկոսարանի ղիւանի հին թղթերէն, ուր կային Տրդատի և այլոց պարզեազգերը, և ժողովներու բուն ձեռնադրերը, քան թէ հին տիտղոսն է առաջ բերում Եպիսկոպոսապետ. կերեկ թէ նա մեծին Կերսիսի

շաջորդները ընդունեւումէ լոկ Աբքեպիսկոպոս կամ Ապիսկոպոսապետ:

Եթ. 70, «Վրիստոնէից Սատուածպաշտութիւնը և սովորութիւնները չորրորդ գարում»,: :

Թժեպէտ չորրորդ գարում պատմումէ և Հռոմայ Եկեղեցւոյնը, բայց աստուածպաշտութիւնը ևլն զրումէ Հայոց Եկեղեցւոյ պատմութեան վերջը. ի հարկէ ովհապոնէից աստիւածալալունինը ևլն. ընդհանուրին է վերաբերում, բայց մեր Եկեղեցւոյն վերաբերեալ բան չկայ, և Վկրտութիւնը՝ մեր ազգը նորա զրածի պէս չէ ունեցել: Օատկի տօնին և Փենտեկոստէին՝ կամ Հինանց օրերին և այս ևս արեւելեան և արեւմտեան Եկեղեցեաց մէջ ընդհանրական չէր, այլ մի քանի կայսերաց, և ոմանց երեւելի իշխանաց: Լաւ կարդա՛ պատմութիւնը և տեսակը չվերաբերէ ընդհանուրին:

Եթ. 71, Պատմելով Արաց հաւատալը Վրիստոսին, ապա նոցա Վկրտութեան վրայ է խօսում այսպէս: «Պյու ժամանակը Կունէ իսկոյն աեղեկութիւն է տալիս Վրիգոր Լուսաւորչին և կարգադրութիւն է խնդրում այս մասին. բայց նա որովհետեւ գեռ ևս չէր ձեռնադրած, կարող չէր հովեւներ ուղարկել նոցա, ուստի Արաց թագաւորը շտապով ինդրեց Առատանդիանոս Ապյուրէն և նա ուղարկեց եպիսկոպոսունք և եկեղեցական պաշտօնեայք աւետարանը քարտղելու և մատակարարելու նոցա եկեղեցւոյ խորհուրդները»,: :

Հ. Օրբելին այս տեղ ևս սխալումէ պատմազրութեան մէջ: Աւստի դնենք մեր պատմաբանական քննութիւնը, վճռելու համար:

«Օերունի պատմաբան Խորենացին Գիլք Բ. Պ. Զ.Օ. Արաց մկրտութեան համար այսպէս է զբում: «Իսկ երանելոյն Եռնեի խնդրեալ արս հաւատարիմս, յղեաց առ սուրբն Վրիգոր, եթէ զի՞նչ հրամացեսցէ նմա զործել այնուհետեւ, քանզի յօժարութեամբ ընկալան Այլք զքարոզութիւն աւետարանին: Եւ հրաման ընդունի՝ կործանել զկուսան, որպէս ինքն արար, և կանգնել զպատուական նըշան Խաչին մինչև ցօթ տալոյ Տեառն հովեւ յառաջնորդութիւն նոցա»,: :

Հ. Վկրտիչ վարդապետն Եւղերեան հաստատումէ այս բանը Արքոց Հայք կոչեցեալ զբում հատ. Գ. եթ. 134, ցուցանելով Արաց գառնալը մի և նոյն ժամանակում, երբոր եղաւ Հայոցը. «Եւ զի ի նմին ժամանակի հասեալ էր լուրի Վիրը վասն ելց սրբոյն Վրիգորի ի վերապէ, և դարձ աշխարհին Հայոց յԱստուածդիտութիւն, վասնորոյ խնդրեաց սրբութին Կունէ արս ի թագաւորէն Վիրքանայ, և յղեաց ի Հայաստան առ սուրբն Վրիգոր տալ առաջնորդ զօթ Արաց, և կամ հրամացել զի՞նչ պարտ իցէ նմա զործել այնուհետեւ, զի յօժարութեամբ ընկալան ասէ Այլք զքարոզութիւն Եւետարանին: Եյլ նա քանզի չէ էր առեալ զկարգ քահանայական և զաստիճան եպիսկոպոսութեան, հրամացեաց առ ժամն ըզկուսան կործանել, և կանգնել զիսան աերունական ըստ օրինակին զոր արարեալ էր ինքն ի Հայաստան մինչև տացէ Եստուած հովիւս և առաջնորդս»,: :

Եյլ պատմութիւնքը ցուցանումն որ Հայոց և Արաց դարձը եղելէ 301 թ. և զեռ սուրբն Վրիգոր չէր ձեռնազր

ւած։ Սոլա նոյն պատմիչ եր. 137, կղը է՝ “Յետ այսորիկ իրեւ լու եղեւ Վրաց աշխարհին մկրտութիւնն Տրդատայ և պայծառութիւն քրիստոնէութեան ի Հայս, որպէս ի Յօնիս յետ դարձին Կոստանդիանոսի, յղեաց առ նոսա Վիհրան հրեշտակս ըստ ակնարկութեան սրբուհւոյն Նունեայ, և ետ բերել եպիսկոպոսունս և քահանայս, որք եկին և մկրտեցին զՎրացին, և հաստատեցին յաշխարհի անդ զամենայն կարգս պաշտամանց,,,: ”

Կաթօլիկ և Ըւգերեանը յայտնի խոստովանումէ ճշմարտութիւնը Վրաց մըկրտութեան համար սուրբ Լուսաւորչէն ուղարկած հոգեորականաց ձեռքով, թէպէս և զրումէ թէ Կոստանդիանոսէն ևս ուղարկուեցանՅօյն հոգեորականք. իսկ և. Օրբելին բոլորովին ուրանումէ Հայաստանէն հոգեորականաց դալը, և միանդամայն տալիս է Յունաց, և այս բանը կը վճռէ ժամանակազրութիւնը։

Հայք և Վրացիք ընկալան քրիստոնէութիւնը 301 թ։ Առ բբ Լուսաւորիչը ձեւնաղբեցաւ եպիսկոպոս 302 թ. և մըկրտեց զՏրդատ և բոլոր Հայաստանը, այդ ժամանակ Կոստանդիանոս կռապաշտ էր և տիրումը միայն Պաղպային։ “Կորա աշխարհակալութիւնը սկսաւ 312 թ. երբոր գնումը Հռոմի տիրապետող Մաքսիմանոսի վրայ պատերազմ, յանկարծ կէսօրին երեսումէ օղումը լուսեղին խաչ, մակարութեամբս՝ սորտանը էը յառնեն, զօր փորելէ տալի վահաններու վրայ և նկարել է տալի զրօշակներու վրայ, և յաղթումէ Մաքսիմանոսին, առնումէ Հռոմը, տիրումէ Կոտորիային և Ափրիկէին, և շնորհումէ ազատութիւն քրիստոնէական կրօնին, բայց

ինքը չմկրտուեցաւ մինչև մահուան մի քանի օր առաջ։ Յետոյ 323 թ. յաղթելով իւր քեռայր Լիլիանէին՝ առաւ Ռիւզանդիոյն (Ա. Պօլիսը) և տիրեց բոլոր Յունաստանին, և եղաւ միահեծան կայոր Հռոմէական տէրութեան։

Եյս Ճիշդ ժամանակադրական հաշւով Տրդատ 11 տարի առաջ հաւատաց Քըրիստոսին քան զԿոստանդիանոս, և Հայաստանի մէջ 22 տարով առաջ էր պայծառուցել և թագաւորել քրիստոնէութիւնը քան թէ Յունաստանում, ուրեմն Վրացիք մնացին արդեօք 22 տարի առանց մկրտութեան, մինչև որ Կոստանդիանոս տիրեց Յունաստանին, այսինքն 301 թուից մինչև 323 թիւը, Հարց Ըւգերեանի և Օրբելոյ ասելով. — ոչ երբէք. վասն զի Ըւգերեանի ասելով. «Յետ այսորիկ իրեւ լու եղեւ Վրաց աշխարհին մկրտութիւնն Տրդատոյ և պայծառութիւն քրիստոնէութեան ի Հայս . . . յղեաց Վիհրան հրեշտակս ելն,,. ուրեմն Վրացիք 302 թ. մկրտութիւնը և եկեղեցական պաշտամունքները առել են սուրբ Գրիգոր Լուսաւորչէ ուղարկուեած եպիսկոպոսներէն և քահանաներէն, և այնուշետև Վրաց Կաթողիկոսները ձեռնադրւումին Հայոց Կաթողիկոսներէն մինչև Կիւրիոն կամ 580 թիւը, որոյ ժամանակ եղաւ բաժանումը Հայոց և Վրաց Կեկեղեցեաց, և վերջինը Քաղկեդոնի ժողովներուներով՝ միացաւ Յունաց հետ։ Օչայս խոստովանումէ և Հ. Օրբելին եր. 103, թէ “580 թուին երբ Վրաց Կաթողիկոսը վախճանեցաւ, նոցա խորանու Մովսէս Կաթողիկոսը Կիւրիոն անունով յաւնադաւանը, որ Ըրարտատայ քորեպիսկոպոս էր, ձեռնա-

զրեց Կաթողիկոս և ուղարկեց Վ. բաստան։  
Եւ եր. 215, տող 4, կըդրէ թէ « մեր  
Կաթողիկոսները ունեին առաջ Վ. բաց  
ազգի Կաթողիկոսներ ձեռնադրելու ար-  
տօնութիւնը խսկըքանէ նորանց կռապաշ-  
տութիւնից դառնալուց մինչև նորանց  
Ավերիոն կաթողիկոսը իրը 200 տարի, :  
Երրոր վերջումը պիտի խոստվանէր ճըշ-  
մարտութիւնը, թէ Վ. բաց ազգի կաթո-  
ղիկոսները, նորանց կռապաշտութիւնիցն  
դառնալուց սկսած մինչև Ավերիոնը, ձեռ-  
նադրութիւնն այսոց կաթողիկոսներէն, ու-  
րեմն ընչու է ուրանում, որ նոյցամիլրտող-  
ները այսատանէն եկած եպիսկոպոսները  
և քահանայքն են, և եպիսկոպոսութեան  
աթոռը սուրբ Լուսաւորիչն է հաստատել  
և ոչ թէ Յոյնք։ Որ այն ժամանակ Կոս-  
տանղիանոս կռապաշտ էր։

Եր. 77, տող 13. « Բայց սուրբն Մես-  
րոսպ երբ Ա. Պոլսից յետ էր գալիս, թողաւ  
այն տեղ իւր աշակերտներին, որ լաւ վարժ-  
ւին Յունաց լեզումը, այն տեղ մնացին  
նոքա իրը տասը տարի, մինչև Եփեսոսի  
ժողովի աւարտութիւն. 431 թուին միարա-  
նական թուղթ առան մի քանի եպիսկո-  
պոսներէն որ այերը զգուշանան Կեսոն-  
րի մոլորութիւնն է . . . և դարձան այսա-  
տան։ :

Պատմութիւնն այսպէս է ուսուցանում  
(Խոր. զիբք Գ. զլ. ՞ՕՇ), թէ Ենասովի-  
սո զօրավարը արգելեց աշակերտաց բազ-  
մութիւնը Մելիտենէ քաղաքում Եկակ  
եպիսկոպոսի մօտ. և միայն զՄեսրոսպ և  
զՎարդան է ուղարկում Ա. Պոլս կայսեր  
մօտ։ Խոկ Գ. Ա. ասէ, որ սուրբն Մեսրոսպ  
և Ասհակ ուղարկում են Ա. Պոլս մի  
քանի աշակերտներ թարգմանութեան հա-

մար (425 թ.). Երբ վերադառնում են  
Յունաց բաժնեն Պարսից բաժինը, բե-  
րումն Եփեսոսի ժողովի վճիռը 431 թ.  
որը այն տեղ մնումէն 6 տարի։

(Մատուցեան է յետուիլայ, ահապէտն)

## Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

### ՏԵՂԵԿԱԳԻՐ

Պ. ԲՐՈՒՆԻ ԳԱԶԴԱՆԱՐԻՆ ԹԱՐԴՄԱՆԱՄ  
ԹՈՎՄԱՆ ԱՐԺՐՈՒՆՈՒՑ ՏԵՍՆԵՐՈՐԴ ԴԱ-  
ՐՈՒՄ ԳՐԱԴ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՅ (\*)։

Վերջին տարիներս այկական մատե-  
նագրութիւնը հարատացաւ պատմական  
շատ նշանաւոր հրատարակութիւններով։

Եյս հրատարակութիւններից քանիք  
առաջին անգամ հրատարակուեցան, այլք  
կրկին անգամ, ոմանք բանաւոր քննու-  
թիւններ են բովանդակում, իսկ այլք  
Խաչակրաց արշաւանաց վերաբերեալ մե-  
ծահատոր քաղուածոյք են կազմում և  
ֆիացեալք Լատանիներէն և Գաղղիարէն  
բազմաթիւ թարգմանութիւններ են։

Առաջին դարուց, այն է Վերուբնա  
կամ Լարուբնիս պատմագրից սկսեալ  
մինչև Սոտքել պատմագիրը կամ մեր  
թուականի տասնեեօթներորդ դարը, առ-  
հասարակ այ պատմագրաց թիւը հա-  
սանում է երեսնի չափ և բաժնեւում է  
երեք դասակարգութեան, առաջին դա-  
սակարգին պատկանում են չետեկալ պատ-  
մագիրները, Եւսեբիոս, Սոտքել, Ամու-

(\*) Mélanges Asiatiques tirés du Bulletin, de l'Académie Imperiale des sciences de St-Petersbourg. Tome VI. livraison 2 p. 226—233.